ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2019թ. N 1152- Ա

ք. Ստեփանակերտ

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԾԽԱԽՈՏ ՄՇԱԿԱԾ ԵՎ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ, 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ 2019 թվականին Արցախի Հանրապետության Մարտունու և Քաշաթաղի շրջաններում ցրտահարության հետևանքով վնաս կրած ծխախոտագործներին (այսուհետ՝ ծխախոտագործներ) ոչնչացված բերքի յուրաքանչյուր 1 կիլոգրամի դիմաց միանվագ տրամադրվում է պետական աջակցություն՝ 30 (երեսուն) ՀՀ դրամ գումարի չափով :

2. Թույլատրել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 2 խմբի 1 դասի «12 Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծախսային ծրագրի «Բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով տուժած հողօգտագործողներին և տեխնածին աղետների ու գիշատիչ կենդանիների հարձակման հետևանքով վնաս կրած բնակիչներին աջակցություն» միջոցառմամբ նախատեսված միջոցներից 18 420 000 (տասնութ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ հատկացնել ծխախոտագործներին՝ համաձայն հավելվածի (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 472900 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի դեկտեմբերի 27-ի
N 1152-Ա որոշման

ՑԱՆԿ
2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՆԵՐԻ

Հ/հ	Ծխախոտագործի ազգանուն, անուն, հայրանուն	Տարածք (հա)	Ցրտահարված բերք (կիլոգրամ)	Տրամադրվող գումար (ՀՀ դրամ)
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ				
1	Պետրոսյան Հայրապետ Գրիգորիի	23	150 000	4 500 000
2	Գաբրիելյան Վալերիկ Յուրիկի	2	6 000	180 000
3	Գրիգորյան Սերյոժա Գրիգորիի	3.7	30 000	900 000
4	Պետրոսյան Սերժիկ Ալբերտի	3.4	9 000	270 000
5	Դանիելյան Վադիմ Վիլենի	5	30 000	900 000
6	Ղարիբյան Ռիտա Նարիմանի	4	12 000	360 000
7	Միրզոյան Հունան Վալերիի	2	15 000	450 000
8	Մխիթարյան Աշոտ Վանուշի	7	29 000	870 000
9	Վարդանյան Արտիկ Էլդարի	3	9 000	270 000
10	Ալավերդյան Անդրանիկ Լազարի	12	36 000	1 080 000
11	Դանիելյան Գուրգեն Այոշայի	5	40 000	1 200 000
12	Գրիգորյան Սանասար Գեորգիի	13	39 000	1 170 000
13	Գևորգյան Ռաֆիկ Գրիգորի	3	9 000	270 000
Ընդամենը		**86.1**	**414 000**	**12 420 000**
ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ				
1	Պետրոսյան Մամփրե Գրիգորիի	20	200 000	6 000 000
Ընդամենը		**20**	**200 000**	**6 000 000**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՀ-ում		**106.1**	**614 000**	**18 420 000**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ